


«Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի 2021թ. սեպտեմբերի 25-ի թիվ 2 նիստում գիտական խորհրդի նախագահ



Արսև Բոնեցյան

Խ.Ա.ԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐՇԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Կանոնակարգի նպատակն է որոշել Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի (այսուհետև՝ բուհի) գիտական աշխատողների մասնագիտական որակի համապատասխանությունը նրանց զբաղեցրած պաշտոններին, առաջնորդվելով նրանց գիտական և գիտատեխնիկական գործունեության օբյեկտիվ գնահատմամբ՝ համաձայն տվյալ պաշտոնը բնորոշող չափորոշիչների:

1.2. Կանոնակարգը մշակված է, առաջնորդվելով «Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին» ՀՀ օրենքի 17.3 կետով, ՀՀ Կառավարության 03/10/2001թ. N 935 որոշումով:

1.3. Կանոնակարգով սահմանվում են հետևյալ գիտական պաշտոնների հավակնության չափորոշիչները. ա) գլխավոր գիտական աշխատող, բ) առաջատար գիտական աշխատող, գ) ավագ գիտական աշխատող, դ) գիտական աշխատող, ե) կրտսեր գիտական աշխատող:

2. Ատեստավորմանը ենթակա գիտական աշխատողների ցուցակի կազմումը

2.1. Ատեստավորման ցուցակում անմիջապես ներառվում են այն գիտական աշխատողները, որոնք ատեստավորման գործընթացի սկզբի օրվա դրությամբ զբաղեցնում են սույն կանոնակարգի 1.3 կետով սահմանված գիտական պաշտոնները:

3. Որակավորող հանձնաժողովը

3.1. Ատեստավորումն անցկացնելու համար բուհի ռեկտորի հրամանով ստեղծվում է որակավորող հանձնաժողով (այսուհետև՝ հանձնաժողով)՝ կազմված բուհի առաջատար գիտնականներից: Հրամանով նշանակվում է հանձնաժողովի նախագահն ու քարտուղարը: Շահերի բախումից խուսափելու համար հանձնաժողովում չեն կարող ներգրավվել բուհի այն գիտնականները, որոնք ենթակա են ատեստավորման համաձայն սույն կանոնակարգի 2.1 կետի, ինչպես նաև ատեստավորվող աշխատակցի ղեկավար հանդիսացող հանձնաժողովի անդամը չի կարող մասնակցել տվյալ աշխատակցի որակավորման քվեարկությանը:

Հանձնաժողովի քարտուղարն ունի գործավարական լիազորություններ, և չի մասնակցում քվեարկություններին:

3.2. Հանձնաժողովին ներկայացվող փաստաթղթերի ցուցակը (Հավելված N 2), ներկայացման ժամկետները, հանձնաժողովի նիստերի անցկացման իրավասությունը, ընդունվող որոշումների ձևերը (Հավելված N 3) ու քվեարկության կարգը կանոնակարգվում է համաձայն ՀՀ

3.3. Հանձնաժողովը կազմում է ատեստավորման անցկացման օրացուցային պլանը, համաձայնեցնելով այն գիտական ստորաբաժանումների ղեկավարների հետ, որից հետո ատեստավորման ենթակա աշխատակիցներին հայտնվում է իրենց որակավորման օրն ու ժամը:

3.4. Որակավորումն անցկացնելիս հանձնաժողովը առաջնորդվում է բացառապես սույն կանոնակարգի Հավելված N 1-ով սահմանված քանակական և որակական չափորոշիչներով:

3.5. Հանձնաժողովն իրավասու է անցկացնելու որակավորումը, եթե նիստին մասնակցում է հանձնաժողովի անդամների առնվազն 2/3-ը: Որոշումն ընդունվում է փակ գաղտնի քվեարկությամբ՝ ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում որոշումն ընդունվում է որակավորվողի օգտին:

3.6. Հանձնաժողովն իրավասու է պահանջել բուհի ղեկավարությունից, ինչպես նաև գիտական ստորաբաժանումների ղեկավարներից որակավորումն իրականացնելու համար անհրաժեշտ տվյալներ:

4. Ատեստավորման ընթացակարգը

4.1. Ատեստավորման անցկացման ժամանակացույցը սահմանվում է բուհի ռեկտորի հրամանով, որի մասին որակավորման ենթակա անձինք տեղեկացվում են ատեստավորման գործընթացի սկզբից առնվազն 3 օր առաջ:

4.2. Ատեստավորումը հիմնված է գիտական աշխատողների գործունեության օբյեկտիվ և բազմակողմանի գնահատման վրա, որն իրականացվում է, հաշվի առնելով քանակական և որակական չափորոշիչները: Գնահատման մեթոդաբանությունը մանրամասնած է սույն կանոնակարգի Հավելված N 1-ում (1-ին և 2-րդ կետեր): Ընդհանուր գնահատականը (միավորը) ստացվում է քանակական և որակական ցուցանիշների միավորները գումարելով: Տվյալ գիտական պաշտոնին հավակնելու համար աշխատակիցը պետք է բավարարի Հավելված N 1-ի 3-րդ կետով սահմանված «Գիտական պաշտոններին հավակնելու մինիմալ պայմաններին»:

4.3. Ատեստավորում (գիտական կադրերի որակավորում) անցկացվելուց առնվազն 3 օր առաջ որակավորող հանձնաժողովին են ներկայացվում ատեստավորվող գիտական աշխատողի անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը՝ ըստ Հավելված N 1-ի ձևերի: Ատեստավորվող գիտաշխատողը կարող է իր նախաձեռնությամբ Որակավորող հանձնաժողովին ներկայացնել նաև լրացուցիչ տվյալներ իր մասնագիտական գործունեության մասին:

4.4. Որակավորման անցկացման համար ատեստավորվող գիտական աշխատողը, ինչպես նաև նրա գիտական ստորաբաժանման ղեկավարը հրավիրվում են հանձնաժողովի նիստի: Որակավորվող գիտական աշխատողի՝ առանց հարգելի պատճառի հանձնաժողովի նիստին չներկայանալու դեպքում հանձնաժողովը կարող է որակավորումն անցկացնել նրա բացակայությամբ:

4.5. Ատեստավորման ժամանահաժամային արձակուրդի կամ գործուղման պատճառով բացակայող գիտական աշխատողների ատեստավորումը հետաձգվում է մինչև նրանց վերադարձը, ինչը հաշվի է առնվում ատեստավորման ժամանակացույցում, բացառությամբ այն դեպքի, երբ բացակայող աշխատակիցը գրավոր համաձայնություն է տալիս կատարել որակավորումը իր բացակայությամբ:

4.6. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են՝ համաձայն Հավելված N 3-ի Ձև 3.1-ի: Որակավորման արդյունքում ամեն աշխատակցի համար կազմվում է ատեստավորման թերթիկ՝ համաձայն Հավելված N 3-ի Ձև 3.2-ի, որի պատճեն որակավորմանը հաջորդող 3 օրվա ընթացքում հանձնվում է ատեստավորվող աշխատակցին: Ատեստավորման թերթիկի բնօրինակը հանձնվում է բուհի Անձնակազմի հաշվառման բաժին՝ աշխատակցի անձնական գործին կցելու համար:

4.7. Հանձնաժողովը որակավորվողին տալիս է «Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին» կամ «Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին» գնահատականներից մեկը: Վերջին դեպքում հանձնաժողովը պարտադիր ներկայացնում է պաշտոնի փոփոխման առաջարկ, նշելով առաջարկվող պաշտոնը (հիմք ընդունելով Հավելված N 1-ի 3-րդ կետի չափորոշիչները):

4.8. Որակավորման արդյունքները հանձնաժողովի նիստից հետո 3 օրվա ընթացքում ներկայացվում են բուհի ռեկտորին և հիմք են հանդիսանում պաշտոնի բարձրացման կամ իջեցման, պաշտոնից ազատման, պաշտոնական դրույքաչափի բարձրացման կամ իջեցման ու հավելավճարի սահմանման համար:

1) Գիտաշխատողի գիտական գործունեության գնահատման քանակական ցուցանիշները

Գիտաշխատողի գիտական գործունեության գնահատման քանակական ցուցանիշների վրա հիմնված գնահատականը որոշվում է (հաշվարկվում է) համաձայն ստորև ներկայացված մեթոդաբանության:

Քանակական E գնահատականը որոշվում է, գումարելով հետևյալ բաղադրիչների գնահատականները. ա) գիտական պարբերականներում տպագրված հոդվածներ, բ) մենագրություններ, գիտամեթոդական ձեռնարկներ, հոդվածների ժողովածուների հրապարակումներ (proceedings), գ) արտոնագրեր, դ) թեկնածուական ատենախոսությունների ղեկավարում, ե) դրամաշնորհային նախագծերի, պետական ֆինանսավորմամբ մրցույթային գիտական ծրագրերի նախագծերի ղեկավարում, զ) մրցանակներ: Համապատասխան գնահատականները որոշվում են հետևյալ բանաձևերով.

ա) գիտական պարբերականներում տպագրված հոդվածներ

Հոդված՝ գիտական պարբերականում տպագրված աշխատություն: Պարբերականը պետք է ներառված լինի Web of Knowledge, Scopus և միջազգային այլ շտեմարաններում, ՀՀ կամ օտարերկրյա պետության բարձրագույն որակավորման հանձնաժողովի ամսագրերի ցանկերում, կարող է լինել նաև այդ ցանկերում չընդգրկված, բայց գրախոսվող ու մատենագրվող ամսագիր:

Հաշվարկի բանաձևը (լրացվում է ամեն հոդվածի համար և գումարվում)՝

$$E_1 = \sum \frac{IF}{N^{1/3}}$$

որտեղ IF - ամսագրի տվյալ տարվա ազդեցության գործակիցն է՝ ըստ «Institute for Scientific Information (ISI JCR)»-ի տվյալների, N - ընդհանուր համահեղինակների թիվը:

Ցուցում. 0.25-ից ցածր ազդեցության գործակցով ամսագրի դեպքում նրան վերագրվում է $IF=0.25$; ազդեցության գործակից չունեցող պարբերականների դեպքում $IF=0.20$:

բ) մենագրություններ, գիտամեթոդական ձեռնարկներ, հոդվածների ժողովածուների հրապարակումներ (proceedings)

Այս դասում ընդունելի են մենագրություններ, գրքեր, գիտամեթոդական ձեռնարկներ, հոդվածների ժողովածուներ (ներառյալ՝ հոդվածներ գիտաժողովների ժողովածուներում), որոնք ունեն գիտական կազմակերպության կամ ԲՈՒՀ-ի գիտական խորհրդի երաշխավորություն, և հրապարակվում են ISBN դասիչով:

Հաշվարկի բանաձևը (լրացվում է ամեն տպագրության համար և գումարվում)՝

$$E_2 = \sum \frac{P}{N^{1/3}}$$

որտեղ P – տպագրության կշռային արժեքն է, իսկ N - ընդհանուր համահեղինակների թիվը:

Ցուցում. տպագրված մենագրության (գրքի) դեպքում $P=0.50$; գրքում գլխի դեպքում $P=0.25$; գիտական ժողովածուներում և գիտաժողովների աշխատություններում տպագրված հոդվածի կամ գիտամեթոդական ձեռնարկի դեպքում $P=0.15$: Գիտաժողովների թեզիսները չեն գնահատվում:

գ) արտոնագրեր

Հաշվարկի բանաձևը (լրացվում է ամեն արտոնագրի համար և գումարվում)՝

$$E_3 = \sum \frac{A}{N^{1/3}}$$

որտեղ $A=1.00$ ՝ արտերկրում գրանցված արտոնագրերի դեպքում, և $A=0.10$ ՝ ՀՀ-ում գրանցված արտոնագրերի դեպքում, իսկ N - ընդհանուր համահեղինակների թիվն է:

դ) թեկնածուական ատենախոսությունների դեկլարում

Հաշվարկի բանաձևը՝

$$E_4 = \sum PhD$$

որտեղ $PhD=0.70$ ՝ դեկլարի դեպքում, և $PhD=0.40$ ՝ համադեկլարի դեպքում:

ե) դրամաշնորհային նախագծերի, պետական ֆինանսավորմամբ մրցույթային գիտական ծրագրերի նախագծերի դեկլարում

Հաշվարկի բանաձևը՝

$$E_5 = \sum Gr$$

որտեղ $Gr=0.1$ ՝ մինչև 1 մլն. դրամ համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալով նախագծի դեպքում, $Gr=0.1+F/20$ ՝ 1 մլն. դրամը գերազանցող համարժեք ընդհանուր ֆինանսական ծավալով նախագծի դեպքում, որտեղ F - ընդհանուր ֆինանսական ծավալն է՝ արտահայտված մլն. դրամով:

Ցուցում. հաշվի է առնվում միայն նախագծերի դեկլարումը, բայց ոչ մասնակցությունը

զ) մրցանակներ

Հաշվարկի բանաձևը՝

$$E_6 = \sum \frac{Aw}{N^{1/3}}$$

որտեղ $Aw=5.00$ ՝ ճանաչված միջազգային գիտական մրցանակի դեպքում, $Aw=3.00$ ՝ ՀՀ Նախագահի, ՀՀ կամ օտարերկրյա որևէ պետության պետական մրցանակի դեպքում:

Ընդհանուր քանակական գնահատականը (միավորը) ստացվում է բաղադրիչ գնահատականների գումարումով, կիրառելով աշխատակցի S հաստիքային դրույրաչափից կախված գործակից, և բերելով արդյունքը ամբողջ թվի՝

$$E = \text{int} \left[100 \times (1 - \lg S) \times \sum_{i=1}^6 E_i \right]$$

2) Գիտաշխատողի գիտական գործունեության գնահատման որակական ցուցանիշները

Գիտաշխատողի գիտական գործունեության գնահատման որակական ցուցանիշների վրա հիմնված գնահատականը որոշվում է Որակավորող հանձնաժողովի կողմից՝ հաշվի առնելով գիտաշխատողի գործունեության ստորև առանձնացված չափանիշները՝ ա) մասնակցությունը գիտաժողովներին, բ) բուհում իրականացվող գիտական հետազոտություններում ներգրավվածության աստիճանը, գ) մասնակցությունը ՀՀ պետական և միջազգային մրցույթային գիտական հետազոտական ծրագրերին (բացառելով նախագծերի ղեկավարումը), դ) գիտամանկավարժական գործունեությունը (բացառելով ասպիրանտների ղեկավարումը), ե) փորձաքննական գործունեությունը, զ) կիրառական մշակումներում ներգրավվածության աստիճանը, է) մասնակցությունը խմբագրական խորհուրդներում, գիտական խորհուրդներում ու հանձնաժողովներում, ը) աշխատակցի նախկինում ունեցած գիտական ներդրումը, հրատարակված ուսումնական ձեռնարկները, դասագրքերը, մեթոդական ուղեցույցերը, բառարանները, թեզիսները:

Որակական ցուցանիշների գնահատման համար Որակավորող հանձնաժողովը մշակում է ներքին գնահատման միասնական մոտեցումներ, որոնցով առաջնորդվում է ըստ վերը նշված 8 չափորոշիչներով աշխատակցին գնահատելու համար: Որակական ցուցանիշներով գնահատման առավելագույն գումարային արժեքն է 150 միավոր:

Ստորև բերված է այդ չափորոշիչների նկարագրությունը:

ա) մասնակցությունը գիտաժողովներին

Հաշվի են առնվում գիտաժողովների կազմակերպչական աշխատանքները (նախագահում, ծրագրային, խորհրդատվական, կազմակերպչական կոմիտեներ), զեկուցումների քանակն ու տեսակը (հրավիրված, բանավոր, ստենդային):

բ) բուհում իրականացվող գիտական հետազոտություններում ներգրավվածության աստիճանը

Հաշվի են առնվում. – մասնակցությունը ինստիտուտի գիտական ծրագրերի մշակմանը, – ակտիվությունը ինստիտուտի գիտական սեմինարներում (զեկուցումներ, քննարկումներ), – մասնակցությունը այլ գիտական ստորաբաժանումներում կատարվող հետազոտություններին և այլն:

գ) մասնակցությունը ՀՀ պետական և միջազգային մրցույթային գիտական հետազոտական ծրագրերին (բացառելով նախագծերի ղեկավարումը)

Հաշվի է առնվում գիտաշխատողի մասնակցությունը ՀՀ պետական ֆինանսավորմամբ ծրագրերին (թեմատիկ, նպատակային, միջազգային համագործակցության), ինչպես նաև միջազգային դրամաշնորհային ծրագրերին:

դ) գիտամանկավարժական գործունեությունը (բացառելով ասպիրանտների ղեկավարումը)

Հաշվի է առնվում գիտաշխատողի դասախոսական գործունեությունը, ուսանողների համար լաբորատոր աշխատանքների ու սեմինարների վարումը, կուրսային և դիպլոմային աշխատանքների ղեկավարումը, ներգրավվածությունը քննական հանձնաժողովների աշխատանքներին, մասնակցությունը բուհի կառույցներում (ամբիոն, լաբորատորիա), զեկուցումները երիտասարդական գիտաժողովներում և այլն:

ե) փորձաքննական գործունեությունը

Հաշվի է առնվում գիտաշխատողի մասնակցությունը գիտական պարբերականներում հոդվածների ռեգենզավորմանը, պետական և միջազգային գիտական նախագծերի փորձաքննությանը, պետական ծրագրերի փորձաքննությանն ու վերլուծությանը, պայմանագրային փորձաքննական աշխատանքներին, դատական փորձաքննությանը, ատենախոսական աշխատանքների ընդդիմախոսությանը, գիտության ոլորտին առնչվող փաստաթղթերի մշակմանը և այլն:

գ) կիրառական մշակումներում ներգրավվածության աստիճանը

Հաշվի է առնվում գիտաշխատողի մասնակցությունը կիրառական հետաքրքրություն ներկայացնող մշակումներին, ինչպես նաև նրա ներգրավվածությունը բուհում իրականացվող գիտական արդյունքը շուկա դուրս բերելու աշխատանքներին:

ե) մասնակցությունը խմբագրական խորհուրդներում, գիտական խորհուրդներում ու հանձնաժողովներում

Հաշվի է առնվում գիտաշխատողի անդամակցությունը գիտական հանդեսների խմբագրական խորհուրդներին, անդամակցությունը ՀՀ ԲՈՀ-ի մասնագիտական խորհուրդներին, անդամակցությունը գիտական կազմակերպությունների գիտական խորհուրդներին, մասնակցությունը այլ խորհուրդներում ու հանձնաժողովներում, ինչպես նաև անդամակցությունը մասնագիտական ընկերություններին:

ը) աշխատակցի նախկինում ունեցած գիտական ներդրումը

Հաշվի են առնվում գիտաշխատողի գիտական արդյունքները, արժանիքներն ու ներդրումը գիտության զարգացման գործում (մասնավորապես՝ բուհում) ատեստավորման ժամանակահատվածին նախորդող ժամանակաշրջանում, ինչպես նաև ամբողջ գործունեության ընթացքում տպագրված աշխատանքների քանակն ու որակը, դրանց վրա հղումների ընդհանուր թիվը:

թ) Աշխատակցի կողմից հրատարակված ձեռնարկները, մեթոդական ուղեցույցները, բառարանները և թեզիսները:

Հաշվի են առնվում գիտաշխատողի կողմից հրատարակված ուսումնական ձեռնարկները, մեթոդական ուղեցույցները, բառարանները և թեզիսները:

3) Գիտական պաշտոններին հավակնելու մինիմալ պայմանները

պաշտոն	պահանջներ					
	Գիտական աստիճան					քանակական և որակական չափորոշիչների գնահատականների (միավորների) գումարը
	ՀՀ ԳԱԱ իսկական և թղթակից անդամ	գիտությունների դոկտոր	գիտությունների թեկնածու	մագիստրոս (կամ ԽՍՀՄ ավարտ. բարձ. կրթ.)	բակալավր (կամ ԽՍՀՄ թերի բարձ. կրթ.)	
գլխավոր գիտական աշխատող	այո	այո (> 15 տարվա ստաժ)	ոչ	ոչ	ոչ	> 1000, առնվազն 1 հոդված վերջին 5 տարում
առաջատար գիտական աշխատող	այո	այո	այո (> 10 տարվա ստաժ)	ոչ	ոչ	> 500, առնվազն 1 հոդված վերջին 5 տարում
ավագ գիտական աշխատող	ոչ	այո	այո (> 10 տարվա ստաժ)	ոչ	ոչ	> 200, առնվազն 1 հոդված վերջին 5 տարում
գիտական աշխատող	ոչ	ոչ	այո	այո (> 5 տարվա ստաժ)	ոչ	> 100, առնվազն 1 հոդված վերջին 5 տարում
կրտսեր գիտական աշխատող	ոչ	ոչ	այո	այո	ոչ	առնվազն 1 հոդված վերջին 5 տարում

Գլխավոր գիտական աշխատողը պետք է՝

- ղեկավարի (կամ մասնակցի) կարևորագույն նշանակություն ունեցող գիտական հետազոտություններ (մշակումներ, նախագծեր), այդ թվում՝ գիտական և գիտատեխնիկական պետական ծրագրեր, առաջադրի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) նոր ուղղություններ, որոշի դրանց իրականացման ուղիներն ու միջոցները,
- ընդհանրացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները,
- համակարգի այլ կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող գիտական և գիտատեխնիկական աշխատանքները,
- իրականացնի գիտական կադրերի պատրաստման և վերաորակավորման աշխատանքները:

Առաջատար գիտական աշխատողը պետք է՝

- մասնակցի առանձին թեմաների և առաջադրանքների շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), ղեկավարի այդ հետազոտությունները (մշակումներ, նախագծեր) կատարող աշխատանքային խումբ կամ այլ գիտական կառուցվածքային ստորաբաժանում, հիմնավորի նոր հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) ուղղությունները և դրանց իրականացման եղանակները, մշակի աշխատանքային ծրագրեր,
- ընդհանրացնի հետազոտությունների արդյունքները, որոշի դրանց օգտագործման ոլորտները,
- մասնակցի գիտական կադրերի պատրաստմանը և դրանց որակավորման բարձրացմանը:

Ավագ գիտական աշխատողը պետք է՝

- մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր) և աշխատանքային խմբի կամ առանձին հետազոտությունների գիտական ղեկավարմանը,
- կազմակերպի գիտական թեմայի շրջանակներում գիտական ու գիտատեխնիկական տեղեկատվության մշակման և վերլուծության աշխատանքները,
- իրականացնի հետազոտությունների (մշակումներ, նախագծեր) արդյունքների վերլուծության և ընդհանրացման աշխատանքներ:

Գիտական աշխատողը, որպես պատասխանատու կատարող, պետք է՝

- մասնակցի գիտական թեմայի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր), գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ու հետազոտության արդյունքների մշակման, վերլուծության և ընդհանրացման աշխատանքներին:

Կրտսեր գիտական աշխատողը պետք է՝

- մասնակցի գիտական թեմայի առանձին մասերի շրջանակներում կատարվող հետազոտություններին (մշակումներ, նախագծեր)՝ պատասխանատու կատարողի ղեկավարությամբ,
- կատարի տվյալ թեմայով գիտական և գիտատեխնիկական տեղեկատվության ուսումնասիրություն:

**ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐ**

Ձև 2-1

**ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ
որակավորման ժամանակահատվածում (2017-2021թթ.)**

Աշխատակցի ա.ա.հ. _____
Գիտական աստիճան. _____
Գիտական ստորաբաժանում. _____
Պաշտոն / դրույք. _____
Ներկա պաշտոնին նշանակման ամսաթիվը. _____

1. Գիտական աշխատությունների քանակը.

քանակ

1.1. Հոդվածներ գրախոսվող հանդեսներում	
1.2. Մենագրություններ և գլուխներ գրքերում	
1.3. Հոդվածներ գիտաժողովների նյութերում (proceedings) ¹	
1.4. Այլ տպագրված գիտական հոդվածներ, պրեպրինտներ ¹	
1.5. Արտոնագրեր	
1.6. Գիտահանրամատչելի գրքեր ու հոդվածներ	
1.7. Դասագրքեր, ձեռնարկներ	

¹ Բացառելով գիտաժողովների թեզիսները

2. Գիտական աշխատությունների ցուցակը՝ ըստ դասակարգման²

1.1. Հոդվածներ գրախոսվող հանդեսներում.
.....
.....
1.2. Մենագրություններ և գլուխներ գրքերում.
.....
.....
1.3. Հոդվածներ գիտաժողովների նյութերում (proceedings). ¹
.....
.....
1.4. Այլ տպագրված գիտական հոդվածներ, պրեպրինտներ. ¹
.....
.....
1.5. Արտոնագրեր.
.....
.....
1.6. Գիտահանրամատչելի գրքեր ու հոդվածներ.
.....
.....
1.7. Դասագրքեր, ձեռնարկներ.
.....
.....

Գիտական աշխատող՝

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

² Ցուցակում նշել ամեն նյութի լրիվ ելքային տվյալները

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐՈՒՄ ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻ ԱՆՁՆԱԿԱՆ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
որակավորման ժամանակահատվածում (2017- 2021թթ.)**

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական ստորաբաժանում. _____

Գիտաժողովի անվանումը	Անցկացման վայրն ու ժամկետը	Զեկուցման անվանումը	Զեկույցի ձևը (հրավիրված, բանավոր, ստենդային)	Զեկուցել անձամբ (այո-ոչ)	Զեկույցի հղումը գիտաժողովի թեզիսների գրքում կամ ծրագրում

Գիտական աշխատող՝

_____ (պաշտոնը) _____ (ստորագրություն) _____ (ա.ա.հ.)

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

_____ (պաշտոնը) _____ (ստորագրություն) _____ (ա.ա.հ.)

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
որակավորման ժամանակահատվածում (2017-2021թթ.)**

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական ստորաբաժանում. _____

Գիտամանկավար- ժական գործունեու- թյան ձևը	Կուրսի / աշխատանքի թեման, բակալավր- իատ / մագիստրատուրա / ասպիրանտուրա, ուսուցման տարին, ղեկավարվող ուսանողը ⁴	Բարձրագույն ուսումնական հաստատությունը	Ժամկետը
Դասախոսություն			
Լաբորատոր աշխատանքներ			
Դիպլոմային աշխատանքների ղեկավարում			
Ասպիրանտների գիտական ղեկավարում			
Գիտամանկավար- ժական գործունե- ության այլ ձևեր (մանրամասնել)			

Գիտական աշխատող՝

_____ (պաշտոնը)

_____ (ստորագրություն)

_____ (ա.ա.հ.)

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

_____ (պաշտոնը)

_____ (ստորագրություն)

_____ (ա.ա.հ.)

⁴ Նշել ուսանողի կամ ասպիրանտի անուն ազգանունը

**ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԳԻՏԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆՑ⁵
որակավորման ժամանակահատվածում (2017-2021թթ.)**

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական ստորաբաժանում. _____

Մասնակցություն գիտաժողովների կազմակերպմանը	
Գիտական գործունեության համար ստացված պարգևներ ու մրցանակներ	
Մասնակցություն հանդեսների խմբագրական խորհուրդներին	
Անդամակցություն մասնագիտական ընկերություններին ու միություններին	
Գիտական հոդվածների ռեցենզավորում (նշել ամսագիրը, հոդվածների քանակը)	
Փորձագիտական գործունեություն (նշել ծրագիրը, նախագծերի քանակը)	
Այլ (մանրամասնել)	

Գիտական աշխատող՝

_____ (պաշտոնը) _____ (ստորագրություն) _____ (ա.ա.հ.)

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

_____ (պաշտոնը) _____ (ստորագրություն) _____ (ա.ա.հ.)

⁵ Լրացնել համապատասխան դաշտերը, ներկայացնելով ամփոփ, բայց սպառիչ տեղեկություններ

ԱՆՄԻՋԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ ԿԱՐԾԻՔԸ ԳԻՏԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ
որակավորման ժամանակահատվածում (2017-2021թթ.)

Աշխատակցի ա.ա.հ. _____

Գիտական ստորաբաժանում. _____

Զբաղեցրած պաշտոնը _____

Երբվանից է զբաղեցնում _____

Ղեկավարի առաջարկը որակավորող հանձնաժողովին՝ աշխատակցի պաշտոնի վերաբերյալ

Գիտական ստորաբաժանման ղեկավար՝

(պաշտոնը)

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

ՈՐԱԿԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՁԵՎԵՐ

Ձև 3-1

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
ատեստացիոն (որակավորող) հանձնաժողովի N _____ նիստի (“___” _____ 2021 թ.)**

Ներկա էին.

Որակավորող հանձնաժողովի նախագահի, քարտուղարի և
նիստին ներկա անդամների ա.ա.հ.

Ատեստավորման ենթակա աշխատակիցների գիտական
ստորաբաժանումների ղեկավարների ա.ա.հ.

Օրակարգ.

Տվյալ նիստում ատեստավորվող աշխատակիցների ա.ա.հ.

1⁶. ԼՍԵՑԻՆ. _____
(Ա.Ա.Հ., պաշտոն, գիտական ստորաբաժանում)

որակավորման գործի նյութերը

Հարցերը ատեստավորվողին և դրանց պատասխանները _____

Աշխատակցի գործունեության գնահատականը

- ա) քանակական չափորոշիչներով՝ _____ բ) որակական չափորոշիչներով՝ _____
- գ) գումարային՝ _____

Որակավորող հանձնաժողովի որոշումը.

Համապատասխանում է զբաղեցրած պաշտոնին

Չի համապատասխանում զբաղեցրած պաշտոնին

Առաջարկվում է պաշտոնի փոփոխություն նշել պաշտոնը _____

⁶ Լրացվում է հերթական համարներով՝ ամեն աշխատակցի համար

Քվեարկության արդյունքները. ԿՈՂՄ՝ _____ , ԴԵՄ՝ _____

Որակավորող հանձնաժողովի որոշման մեկնաբանությունը (լրացվում է պաշտոնի փոփոխության առաջարկման դեպքում)

Որակավորող հանձնաժողովի նախագահ՝

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

Որակավորող հանձնաժողովի քարտուղար՝

(ստորագրություն)

(ա.ա.հ.)

Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի
գիտաշխատողի
ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԹԵՐԹԻԿ

- 1. Ազգանուն, անուն, հայրանուն _____
- 2. Ծննդյան տարեթիվ _____
- 3. Կրթությունը, մասնագիտությունը / որակավորումը _____
- 4. Գիտական աստիճանը, կոչումը _____
- 5. Ընդհանուր աշխատանքային ստաժը _____ տարի, այդ թվում վերջին պաշտոնում՝ _____ տարի
- 6. Ատեստավորման պահին զբաղեցված պաշտոնը, նշանակման տարեթիվը _____
- 7. Աշխատակցի գործունեության գնահատականը.
քանակական չափորոշիչներով՝ _____, որակական չափորոշիչներով՝ _____, ընդհանուր՝ _____
- 8. Որակավորող հանձնաժողովի որոշումը. _____

(համապատասխանում է զբաղեցված պաշտոնին / առաջարկվում է պաշտոնի փոփոխություն)

Հանձնաժողովի քանակական կազմը՝ _____, նիստին ներկա՝ _____, որոշմանը կողմ՝ _____, դեմ՝ _____

9. Որակավորող հանձնաժողովի որոշման մեկնաբանությունը. _____

Որակավորող հանձնաժողովի նախագահ՝	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
Որակավորող հանձնաժողովի քարտուղար՝	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
Որակավորող հանձնաժողովի անդամներ՝	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)
	_____	_____
	(ստորագրություն)	(ա.ա.հ.)

Ատեստավորման ամսաթիվը. " _____ " _____ 20__ թ.

Ատեստավորման թերթիկի հետ ծանոթացել էմ _____

(ատեստավորվող աշխատակցի ստորագրություն, ա.ա.հ., ամսաթիվ)